361
2-32

361
2-32

01 MAR 2010
361 [ՈՐԲԱԽՆԱՄ] [գրքատուն]
Հ - 32
Հ83
361
Հ-32
31803

ՀԱՅԻ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՒՀԵԱՅ ՈՐԲԱԽՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912 թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՄՀ — СССР
им. А. Мясникяна
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ընկերութեան հասցէն՝ Петхаинская ул. № 3.

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան «ԷՊՕԽԱ» Մուզէյսկի փող. № 8.
1913

43050

11 JUN 2013

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան՝ կայացած 1912 թուի ապրիլի 8-ին։

Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան մարտի 28-ի ընդ. ժողովը չկայացաւ, ըստ կանոնադրութեան պահանջելիք անդամների թուի $^1/_2$ը (այնը է 198-ը) լրիւ չլինելու պատճառաւ, ուստի և յետաձգուեց ու կայացաւ ապրիլի 8-ին։

Ընկ. նախագահ օր. Մ. Բայսողոլեան հիմնուելով կանոնադրութեան 38 և 39 կետերին՝ բաց արեց ժողովը 52 իսկական անդամուհիների ներկայութեամբ ժամը 1-ին ու առաջարկեց ընտրել ընդ. ժողովի նախագահ և քարտուղար։ Միաձայն ընտրուեցին ընդ. ժողովի նախագահ տիկ. Երանուհի Յարութիւնեան և քարտուղար օր. Հայկանոյշ Նալբանդեան։ Երկրորդ ընդ. ժողովի ծրագիրը նոյնն էր, ինչ որ առաջին ընդ. ժողովինը՝ այն է.

1) 1911 թուի 29-ի մարտի ընդ. ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2) Վարչութեան գործունէութեան զեկուցումը 1911 թուի ընթացքում։

3) Ընկերութեան մուտք և ելքը. 1911 թուի, և վերաստուգիչ անդամների կարծիքը։

4) 1912 թուի նախահաշիւը և նրա փոփոխութիւնը՝ որբանոցի համար տուն գնելու դէպքում։

5) Տուն գնելը։

6) Հերթական կարգով դուրս գնացող վարչ. անդամների, փոխանդամների նաև վերաստուգիչ անդամների ընտրութիւնը։

Նախ քան ծրագրի ընթերցումը՝ ընդ. ժողովի նախագահուհու առաջարկութեամբ ժողովականները ոտանկայս յարգեցին վաստակաւոր գրող Գ. Ն. Սունդուկեանի և բարեգործ Ա. Ի. Մանթաշեանի յիշատակը, ապա ընդ. ժողովի քարտուղար օր. Հ. Նալբանդեանը կարդաց մարտի 29-ի 1911 թուի ընդ. ժողովի արձանագրութիւնը։ Նոյն տարւայ վարչութեան գործունէութեան զեկուցումը կարդաց

ընկ. քարտուղար տ. Ս. Խօջամիրեան։ Ընդ. ժողովը լսելով վարչութեան գործունէութեան զեկուցումը, հաւանութիւն տուեց վարչութեան գործունէութեան։ Գանձապահ տ. Ս. Պետրոսեան կարդաց 1911 թւի մուտքը և ելքը և վերաստուգիչ անդամների կարծիքը, որոնք բոլորովին կանոնաւոր են գտնում մուտքի և ելքի գրքերը ինչպէս և նրանց հետ ներկայացրած բոլոր գրաւոր փաստաթղթերը։

Նաև ընդ. ժողովի ուշադրութիւնը դարձրեց այն կէտին, որ եթէ վարչութիւնը նախահաշուից 124 ր-ի աւել է ծախսել՝ բացատրւում է նրանով, որ որբանոցում 23 երեխայի փոխարէն խնամւել է 24, ընդ. ժողովի ենթադրութեան հակառակ։

Ի նկատի ունենալով վերը յիշած յարգելի պատճառը ընդ. ժողովը եկաւ համաձայնութեան և հաստատեց տարւայ մուտք և ելքի հաշիւը, ապա ընկ. գանձապահը անցաւ 1912 թւի նախահաշուի ընթերցման, ու նկատեց, որ նախահաշիւը կարող է փոփոխութեան ենթարկւել ընդ. ժողովի վճռի համաձայն, եթէ նա վերջնականապէս որոշէ գնել մանաժողովի մատնանշած տունը։

Ինչպէս նաև երևումէ 1911 թւի արձանագրութիւնից ընդ. ժողովում ընտրւել էր մանաժողով՝ յատկապէս տուն գնելու համար։

Մանաժողովի անդամներ կազմում էին հետևեալ անձինք. Տիկ. Վ. Ս. Միլեան, պարոնայք գնդապետ Սուրէնեան, Մ. Ս. Սուլխանեան, Մ. Ի. Պետրոսեան, Դաւթեան, վարչութեան բոլոր անդամները և մանաժողովի կողմից հրաւիրած անձինք էլ. պ.պ. Ս. Ա. Արղութեան-Երկայնաբազուկ, ճարտարապետներ՝ Ի. Դ. Լիսիցեան և Ի. Ի. Տէր-Օհանեան։ Ընդ. ժողովը ձեռնամուխ եղաւ տուն առնելու հարցի քննութեան։

Ընկեր. Վարչութիւնը յայտարարեց ի գիտութիւն ընդ. ժողովի, որ թէև որբանոցի ներկայ բնակարանը ծախս ունի տարեկան միայն 450 ռուբ. ջրի վարձի և վերանորոգման, բայց թէ չափազանց ճնշւած և նեղւածք լինելու պատճառով՝ ոչմի հնարաւորութիւն չունի մնալու նոյն տեղը. ուստի իր կարծիքով անհրաժեշտ է փոխել մի աւելի ընդարձակ ու լայն բնակարան, վճարելով տարեկան 800 կամ 900 ռուբլի։

Ահա այդ նկատմամբ վարչութիւնը անհամեմատ ձեռնտու է համարում ձեռք բերել մանաժողովի մատնանշած տունը, քան թէ իւրաքանչիւր տարի բնակարանի համար վճարել 800 ռուբլի։

Մանաժողովը, երկար որոնելուց յետոյ՝ իր ուշադրութիւնը դարձրեց Թիֆլիսի 5-երրորդ քաղաքամասում, Բէդիէհէմի փող.

№ 3. գտնւած տան վրայ, որը պատկանումէ Մելքո Յակոբեան Թաթէոսեանի ժառանգներին և նրան կից Արշակ Թաթէոսեանին պատկանող հողամասի վրայ որ գտնւում է Մանասերեան նրբանցքում։

Այդ տունը ունի 250 սաժ. հող՝ երկու յարկանի է և հին, Ունի երկու բակ՝ այնպէս, որ Որբանոցի երեխաները բոլորովին առանձնացած կարող են լինել՝ նոյն տան մէջ բնակւող համաբնակներից։ Այդ տանից ներկայումս ստացւում է 1578 ռուբլի եկամուտ։ Տան տէրերի կողմից տունը գնահատւած է 17000 ռուբ. սակայն Հայուհեաց Որբանոցի ընկերութեանը զիջում են 13500-ով իսկ Ա. Թաթէոսեանի հողամասը՝ 1500-ով։

Այդ առթիւ վարչութիւնը ներկայացրեց ընդ. ժողովին մանրամասն թւական տուեալներ, տան տարեկան ել և մտից հաշիւների, որոնք հետևեալն են.

Մուտք.

Վերևի յատակում 3-բնակարան առաջին բնակարանը 4սենեակից բաղկացած, տալիս է եկամուտ տար։	480 ռուբ.
2-ը » 3 սենեակից՝ տալիս է տար.	280 ռուբ.
3-ը	266 ռուբ.
Ներքի յարկը	
1-ին բնակարանը	276 ռուբ.
2-ը »	168 »
3 ը »	108 »
Ընդամէնը. . .	1578 ռուբ.

Ծախս

Քաղաքային տուրք	55 ռ. 86 կ.
Պետական	56 » — »
Հողային (земс.)	26 » — »
Ջրի	40 » — »
Դռնապանին	108 » — »
Պետական բանկին	457 » 47 »
	753 » 53 »

Օր. Նալբանդեան նկատում է, որ տուն գնելու դէպքում ոչ թէ միայն գինը պէտք է տչքի առաջ ունենալ՝ այլ պէտք է ուշադրութեան առնել նաև օդը, թէ որքան նա մաքուր է և առողջարար այդ քաղաքամասում։

Տիտ. Վ. Յովհաննիսեանը ասում է, որ նոյն մասում նա ինքը տուն ունի՝ և վկայում է, որ միշտ գոհ են մնացել օդի մաքրութեան և առողջարարութեան նկատմամբ. անդամուհիներից շատերը հաստատում են նոյնը։

Մասնաժողովի անդամները մի քանի անգամ դիտել են այդ տունը, նաև քաղաքային ճարտարապետներ Ի. Դ. Լիսիցիան և Տէր-Օհանեան ու որբանոցի համար այդ տունը գտնում են նպատակայարմար. իսկ թէ այն պակասութիւնը, որը նկատւում է ներքևի յարկի վերաբերմամբ, այն է խոնաւութիւնը, վերջիններիս կարծիքով կարելի է վերացնել ծախսելով 1000 ռուբլի կամ 1500 ռուբլի. տունը գնահատած է բարեխղճօրէն և եթէ գնելու ու վերանորոգման համար ծախուի 19000՝ կամ աւելի այնուամենայնիւ արժանի է և արժէ գնել։

Մասնաժողովի ցուցադրած տունը գտնւում է Թիֆլիս քաղաքի 5-երրորդ քաղաքամասում Բէգիխէհէմի փող. № 3. պատկանում է Մելքո-Յակոբեան Թաթէոսեանի ժառանգներին կուպչի կրեպոստով, որ նաև հաստատուած է Թիֆլիսի I բաժանմունքի (1-ого одѣла) կուպչի կրէպոստի մատեանում № 955 ի տակ. 1878 թուին հոկտեմբ. 24-ին։ Իսկ Արշակ Թաթեոսեանի հողամասը կից է այդ տանը և պատկանում է իրան կուպչի կրէպոստով Թիֆլիսի շրջանային դատարանի աւագ նոտարի. հաստատութեամբ № 641-ի տակ 1906 թիւ մայիսի 23 ից։ Թաթէոսեանի ժառանգների պայմանագիրը այդ տունը ծախելու վերաբերեալ հետևեալն է։

Տունը ծախել նրանք համաձայն են 13500-ով, այնպէս, որ դրանից 7500-ը ստացուի կանխիկ, Անդրկովկասի Պրիկազի պարտքը 2748 ռուբ. իւր վրայ պէտք է վերցնի ընկերութիւնը, իսկ 3251 ր. 75 կ. ժառանգները համաձայն են յետաձգել, ստանալով այդ գումարի զակլադնոյը (գրաւական) երկու տարուայ ժամանակամիջոցով տարեկան 5 % հաշուելով, իսկ 471 ր. 9 կ. ապառիկներն էլ վճարել պայմանագրի համաձայն։ Ինչ վերաբերւում է Ա. Թաթէոսեանին պատկանած հողամասին. դա համաձայնւում է ծախել 1500 ր. այդ ստանալով կանխիկ։

Ընկ. Վարչութիւնը առաջարկում է ընդ. ժողովին ընդունել տան տէրերի առաջարկած պայմանները՝ վճարելով նրանց հէնց հիմա 9000 ր. ընկերութեան դրամագլխից։

(Ընկերութիւնը 1912 թուի յունուարի 1-ին ունեցել է դրամագլուխ 10,000 ր. բացի այդ յունուարի 1-ին ստացել է հանդուցեալ Մանթաշեանի ժառանգներից 2000 ր.)

2748 ր. 43 կոպ. Անդրկովկասի «Պրիկազի» պարքը ընկ. վերցնէ իր վրայ և 3251 ր. 75 կ. տարեկան 5 %-ով երկու տարի ժամանակամիջոցով գրաւ դնել Մելքո Յակոբեան Թադէոսեանների ժառանգներին, իսկ «Պրիկազի» ապառիկները պայմանագրի համաձայն շինջուցանել կամ բաժանել։ Եթէ Ընկերութիւնը առնի այդ ցուցադրած տունը, որբանոցը կը զետեղուի վերևի յարկի 480 և 280 ռուբլիանոց երկու բնակարաններում, իսկ մնացեալ բնակարանները կը տուին վարձով։ Ընկերութիւնը կանխիկ վճարով 9000 ր. թէև կը ղրկուի տարեկան 427 ր. % ից, բայց բնակարանի վարձ չի վճարի։

Տան տարեկան ծախսը կը լինի հետևեալը.

Անդրկովկասի «Պրիկազի» վճարը . .	457 ր. 43 կ.
% երկրորդ Զակլատնոյի—մոտաւորապէս . .	162 ր. —
դոնապանին	120 ր. —
Ջրի	40 ր. —
Պետական և քաղաքային տուրքեր . . .	100 ր. —
ընդ.	879 ր. 43 կ.

Մուտք տանից

վերևի յարկի 3-րդ բնակարաններից . . .	266 ր.
Ներքևի յարկի բնակարաններից	552 ր.
ընդ.	818 ր.

Ուրեմն տան ծախսը իւրաքանչիւր տարի կըլինի 979 ր. 43 կ., իսկ մուտք 818 ր. որպէս զի լրացուի աւելի ծախսած գումարը, հարկաւոր է տարեկան աւելացնել մօտաւորապէս 170 ռուբլի. և տան պարքն էլ՝ ընդամենը կըլինի 6000 ր.։

Դրա փոխարէն ընկերութիւնը կունենայ սեփական տուն ու հնարաւորութիւն որբանոցը զետեղելու բաւական յարմար և լայն բնակարանում։

Ընդ. ժողովը լսելով վարչութեան յայտնած կարծիքը նաև ուշադրութեան առնելով և ճարտարապետների գրաւական խորհուրդները. միաձայն հաւանութիւն տուեց վարչութեան առաջարկին, հիմնւելով Որբախնամ ընկերութեան կանոնադրութեան վրայ, հաստատուած Թիֆլիսի նահանգապետից 1906 թ. յունիսի 28-ին). որոշեց գնել որբանոցի համար Մելքոն Յակոբեան Թաթէոսեանի ժառանգներին պատկանող անշարժ կայքը, որը գտնւում

է Թիֆլիսի 5-երրորդ քաղաքամասում Բեգլեէմի փող. № 3 և Թիֆլիս քաղաքի I բաժանմունքի (отдѣленія) կրէպոստնի գործերի մատեանում 1873 թ. դեկ. 24-ին № 955, հիմնաւոր տեսակներով նշանակուած է սեփականութիւն Մ. Յ. Թադէոսեանի։

Ահա այդ անշարժ կայքը առնել 13500-ով, որից կանխիկ վճարել 7500 ր. Անդրկովկասի Պրիկազի պարտքը 2748 ր. 43 կ. Հայուհեաց որբախնամ ընկ. վերցնի իր վրայ, իսկ 3250 ր. 57 կ. գումարի զակլատնոյ կրէպոստ կատարէ Արշակ, Տիգրան, Յովսէփ, Արամ, և Ալէքսանդր Մաթէոսովիչ Թաթէոսեանների, Մարիա Մաթ. Աբովեանի և Աննա Մաթ. Բագամեանի անուններով, երկու տարուայ ժամանակամիջոցով 5% ով, վճարելով իւրաքանչիւր տարուայ վերջը։ Իսկ Անդրկովկասի Պրիկազի ապառնիկների 471 ր. 9 կ. գումարից 120 ր. վճարել Թաթէոսեանի ժառանգներին և 351 ր. 9 կ. Հայուհեաց Որբախնամ ընկերութեանը։ Այն հողաբաժինը, որը Առեւտրական մուրհակով Թիֆլիսի շրջանային դատարանում Աւագ նոտարի ձեռքով հաստատած է 1906 թ. մայիսի 15 ին 641 համարի տակ՝ իբր սեփականութիւն Արշակ Թաթէոսեանի, ձեռք բերել կանխիկ, վճարելով 1500 ր.։ Իսկ թէ այդ բոլոր անշարժ կայքը ձեռք բերելու պահանջելիք բոլոր թէ առևտրական և թէ գրաւական մուրհակները և բոլոր օրէնսդրական ձևակերպումները, նոյնպէս և գլխաւոր գրաւոր արտագրութիւնների ստանալը և Զակլադնոյ մուրհակի կատարելը ընդ. ժողովը յանձնարարեց ի կատար ածելու ընկերութեան նախագահ օր. Ս. Բայսողլեանին, որոշելով այդ տունը առնելու առթիւ, եթէ հարկ լինի ծախսել մինչև 19000 ռուբլի։

Այնուհետև ընդ. ժողովը անցաւ ընտրութիւնների. հերթական կարգով դուրս գնացող վարչ. անդամներ՝ Տ. Ա. Ալիբէգեան, Խոջամիրեան, կրկին վերընտրեցին, իսկ հերթական կարգով դուրս գնացող վարչ. անդ. Տիկին Ս. Շարբաբչեանի. (որ ընտանեկան հանգամանքների շնորհիւ չէր յաճախում ժողովները) փոխարէն ձայների առաւելութեամբ ընտրուեց նոր անդամ Տիկ. Սոֆիա Գ. Գէորգեան, փոխանդամ վերընտրուեց Տիկ. Դասպարեան իսկ նոր ընտրուեցին Տ. Տ. Սիրանոյշ Ղամբարեան, Մ. Շահազիզեան և օր. Սուլխանեան.

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամները, նոյնպէս և փոխ անդամները բոլորը մնացին անփոփոխ։ Ապա ընդ. ժողովը նոր առնուելիք տան առևտրական մուրհակների, (Купчая крѣпость) վերանորոգման և այլ անակնկալ ծախսերի համար յատկացրեց 2,000 ր.։

Նախագահ. ընդ. ժողովի՝ ա. ԵՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Քարտուղար՝ Օր. Հ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հազար իննհարիւր տասներկու թուին, 18-ին ապրիլի, Հայուհեաց Որբախնամ ընկերութեան հրաւէրով կայացաւ նոյն ընկերութեան որբանոցի համար սեփական տուն գնելու մասնաժողովի նիստը։

Ժողովին ներկա էին որբանոցի համար տուն գնելու մասնաժողովի անդամներ՝ տիկին Վարվառէ Սէրգիենա Միլեան, գնդապետ Աղէքսանդր Դաւթեան Սուրէնեանց, Մաղաթ Պետրոսեան և առանձնապէս հրաւիրուած մասնագէտներ՝ պ. պ. քաղաքային տեխնիկ ինժէներ Սահակ Դանիէլեան Լիսիցեան, ինժէներ Յովհաննէս Յովհաննեսեան Տէր-Օհանեան և իշխան Սարգիս Միքայէլեան Արղութեան։

Որբախնամ ընկերութեան վարչութեան կազմից ներկա էին՝ օր. Սուսաննա Բայսողլեան, օր. Աննա Փուղինեան, տ. Սաթէնիկ Պետրոսեան, տ. Սաթէնիկ Խոջամիրեան, տ. Նինա Ալիբեկեան, իշխանուհի Աննա Արղութեան և տ. Եղիսաբէթ Առաքելեան։ Մասնաժողովի անդամներից բացակա էին՝ պ. պ. Աւետիս Դաւթեան և Մինաս Սոլոմոնովիչ Սուլխանեանց։ Ժողովի նախագահ ընտրուեց օր. Սուսաննա Բայիսողլեան, քարտուղար՝ Մաղաթ Պետրոսեան։

Նախագահուհին նիստը բանալով՝ համառօտ կերպով ծանօթացրեց ժողովականներին որբանոցի ներկա դրութեան հետ, ընդգծելով սեփական տուն ունենալու անհրաժեշտութիւնը։ Նա ասաց, որ ընկերութիւնը այժմ ունի տասներկու հազար ռուբլի կանխիկ դրամ, որից միայն տասն հազարը կարող կլինի յատկացնել տուն գնելու համար։ Երկար որոնումներից յետո վարչութիւնը կանգ է առել IV-րդ քաղաքամասում Բեգլեէմեան փողոցում № 3-րդ Թաթէոսեանների տան վրա։ Տունը անկիւնաւոր է, երեք կողմից շրջապատուած է փողոցներով։

Ունի ընդարձակ հող, այն է 252 քառակուսի սաժէն, վերի յարկը ունի 3 բնակարան՝ բաղկացած բոլորը միասին իննսնեակներից, նոյնքան և ներքին յարկում և երկու յարկն էլ պատշգամբներով. ունի նաև պաղաւ՝ բաղկացած երեք բաժանմունքներից։ Այդ տունը սկզբում գնահատեցին 17 հազար, բայց վերջը զիջեցին 15 հազարով։ Ինժէներներ՝ պ. պ. Տէր Օհանեան և Լիսիցեան և մասնաժողովի անդամներ՝ պ. պ. գնդապետ Սուրէնեան և Մ. Պետրոսեան մանրամասն քննելով վերոյիշեալ—տունը, գտել են որբանոցի համար նպատակայարմար։

Տունը գրաւ է դրուած Պրիկազում 2748 ր. 43 կ., որի համար տարեկան վճարւում է 459 ր. 39 կ. Ասում է, որ տունը նորից գրաւ դնել վարկային որևէ ընկերութեան մէջ, որպէսզի հնարաւոր լինի ամբողջապէս վճարել Թաղէոսեաններին և տունը վերանորոգել։

Ինժ. Տէր-Օհանեան.—Տունը գնահատուած է շատ բարեխղճօրէն. մանաւանդ նա շատ յարմար է որբանոցի պայմաններին, ունի խաղալու համար երկու ազատ ընդարձակ բակ, վերի յարկում մեծ և լայն պատշգամբ, սենեակները բաւականին մեծ և լուսաւոր. իսկ ինչ վերաբերում է տան տեխնիկական կողմին, նա միանգամայն ապահով կարելի է համարել առնւազը 10—12 տարի։ Անհրաժէշտ է մի քանի թեթև վերանորոգումներ, որի համար միանւագ կծախսուի մօտաւորապէս հազար կամ մի փոքր աւելի բուբլի։ Այն է՝ 1) տանիքը կարկատել և ներկել, 2.) արևմտեան կողմի պատը ցէմենտով ծեփել և սւաղել, 3.) հողը հեռացնել պատից՝ ազատելով պատը խոնաւութիւնից, 4.) բակը հարթել, 5.) արտաքնոցները կարգի գցել և 6.) մի քանի մանր-մունր վերանորոգումներ։

Մ. Պետրոսեան—Տունը երևում է, որ հին է, մօտ 60--70 տարու շինութիւն կը լինի, արդեօք յատակի գերանները փթած չեն կարող լինել. չի կարող երբևէ դժբաղդութիւն բերել այդ տունը որբանոցին։

Ինժ. տէր Օհանեան.—Ճիշտ է, տունը հին է, բայց որքան ես քննեցի և բազմակողմանի դիտեցի, մի այդպիսի վտանգ չգտա. թէ առաստաղը, թէ յատակը միանգամայն ամուր են և ապահով. աւելի մանրազննին քննելու համար հարկաւոր է յատակի տախտակները քանդել, բայց ոչ մի տան տէր այդ թոյլ չի տալ։

Ինժ. Լիսիցեան.—Այդ կողմից միանգամայն կարող էք ապահով լինել. տունը կարող է տասն և աւել տարիներ դիմանալ միանգամայն անվտանգ։ Նա շինուած է հիմնաւոր և ամուր. ես մանրամասն քննեցի այդ բոլորը և կասկածանքի ոչ մի նշոյլ չգտա. բացի այդ, տունը ունի հիմնաւոր պաղւալներ թաղերով պատած, իսկ միւս մասի գերանները ամուր են և անվտանգ։

Գնդ. Սուրէնեան.—Այդ կողմից ես էլ եմ միանգամայն ապահով. տունը ճիշտ է, հին է, բայց նա շինուած է հիմնաւոր և ամուր. այդ տան պատմութիւնը ինձ յայտնի է։ Դա հարուստ վաճառական Զանջուղազովինն էր, որ ոչինչ չէր խնայել այդ տունը հաստատուն շինելու համար։ Որբանոցը 10 տարի կարող է ապահով լինել, մանաւանդ ձեռք է բերում շատ ձեռնտու

պայմաններով. 252 սաժէն հողը միայն արժէ այդ գինը՝ հաշուելով քառ. սաժէնը 60 բուբլի, որ հազիւ թէ կարելի լինի այդ գնով՝ այդ քաղաքամասում՝ հող ձեռք բերել։

Ինժ. Տէր Օհանեան.—Այդ տունը ճիշտ որբանոցի համար է, ձեռք բերեցէք անպայման. նա ունի մեծ առաւելութիւններ—լոյսի առատութիւն,—երէք կողմից փողոց, տունը առանձնակի, մաքուր օդ, խաղալու, վազելու ազատ տեղ և այլն։

Ինժ. Լիսիցեան.—Սեփական տուն ունենալը, բացի շատ առաւելութիւններից, նա անշուշտ խրախոյս կտա վարչութեանը զանազան դիմումների միջոցին։ Ձեր գործունէութեան մէջ դուք աւելի վստահ կլինէք և հարակութիւնն էլ պատկառանքով կվերաբերուի դէպի ձեր գործունէութիւնը. ես համոզուած եմ, որ դուք նոյն իսկ շահուած կլինիք։

Նախագահուհի.—Տունը բնակարանային վարձ բերում է վերի յարկից—480+280+266=1026 բուբլու, իսկ ներքնայարկից—276+168+108=552 բուբլի։ Տարեկան ընդամէնը կստացուի 1578 ր.։

Ինժ. Լիսիցեան.—Տունը իր վրա ծախս կունենա տարեկան մօտաւորապէս 800 ր. հաշուելով դռնապանի վարձ տարեկան 120 ր., զանազան նալոգներ 100 բուբլի, վերանորոգման տարեկան միջին թւով 200 ր. Պրիկազի պարաքը տարեկան 380 ր. ընդամենը 800ր.։ Մի այդքան էլ բնակարանի վարձ կստանա, այնպէս որ, որբանոցը ազատուած կլինի բնակարանի վարձ վճարելուց։

Նախագահուհի.—Այդ այն դէպքում, եթէ մենք հնարաւորութիւն ունենանք Թաթէոսեաններին վճարել լիովին 12 հազար բուբլին, բայց մենք կարող ենք վճարել միայն 10 հազար, իսկ երկու հազարը կըմնա բաց։ Բացի այդ, մենք զրկւում ենք մեր դրամագլխի տոկոսներից, որ անում է տարեկան 480 բուբլի։

Տիկ. Միլեան, իշխան. Արղութեան եւ ինժ. Լիսիցեան.—Առաջարկում են խնդրել Թաթէոսեաններին, որ այդ երկու հազար բուբլին յետաձգեն երկու տարով, որի համար տրւի պարտամուրհակ, տարեկան հազար բուբլի վճարելու պայմանով վեց տոկոսով։

Տիկ. Խօջամիրեան.—Առաջարկում է Թաթէոսեանների պարտքը յետաձգել երեք տարով և փոխանակ 2000-ի՝ պահել 2900 ր., որովհետև վերանորոգման համար անհրաժեշտ է բաւականին մեծ գումար։

Իշխան Արղութեան.—Վերանորոգութեան համար աւելի լաւ չէր լինի ժողովարարութեան դիմելը։

Նախագահուհի—Դրա վրա մեծ յոյս չի կարելի դնել, թէն մենք ոչ մի ջանք չենք խնայիլ։

Տիկ. Պետրոսեան—Թադէոսեանները հազիւ թէ համաձայնուեն, քանի որ տունը պատկանում է եօթը անձնաւորութիւնների։

Ինժ. Լիսիցեան եւ Տիկ. Միլեան—կարծում են, որ Թադէոսեաններից պ. պ. Տիգրանը և Սրշակը հաւանական է, որ իրանց մասը թողնեն ընկերութեան վրայ պարտամուրհակով մանաւանդ՝ որ պէտք է տօկօսներ ստանան։

Ինժ. Տէր-Օհանեան—Գտնում եմ, որ հակառակ դէպքում կարելի է և գրաւ դնել տունը։

Ինժ. Լիսիցեան.—Եւ մասնաժողովի անդամներից շատերը դէմ են գրաւ դնելուն, քանի որ ընկերութիւնը այդ ձեռնարկութեան մէջ բաւականին կը կորցնէ, մանաւանդ որ վարկային տան թղթերի գները բաւականին ընկած են։

Ապա նպաստների վճարման քանակի, կուպչի ստանալու և մի քանի այլ օրէնքներ լուսաբանելուց յետոյ, միաձայն ընդունուեց—ա) գնել Թադէոսեանների տունը՝ վճարելով տան և հինգ հազար ռուբլի, բ.) խնդրել Թադէոսեաններին, եթէ այդ հնարաւոր է, 3000 ռուբլի յետաձգել երեք տարի ժամանակով, իւրաքանչիւր տարի հազար ռուբլի վճարելու պայմանով, որի համար վճարել 6%, գ.) տունը վերանորոգելու համար յատկացնել մինչև մի հազար ռուբլի, դ.) տունը թողնել Պրիկազում գրաւ դրած իրան պարքով, այն է, 3100 ռուբ., ե.) Աշխատել խուսափել տունը գրաւ դնելուց և միմիայն ճարահատեալ դէպքում դիմել այդ միջոցին և զ.) թէ տան գնելը և թէ Թադէոսեանների հետ որոշ համաձայնութեան գալը յանձնել Որբախնամ Ընկերութեան Վարչութեան։

Նախագահուհի՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՅՍՈՂՈՒԼԵԱՆ

Մասնաժողովի անդամներ՝
- Վ. Միլեան
- Օր. Ա. Փուղինեանց
- Տիկ. Ս. Պետրոսեան
- պ. Ա. Սուրենեանց
- Իշ. տ. Ա. Արղուբեան
- ինժ. Ս. Լիսիցեան
- տ. Ս. Խոջամիրեանց
- տ. Ն. Ալիբեկեան
- Իշխան Սարգիս Արղուբեան-Երկայնաբազուկ
- Ինժ. Օ. Տեր Օհանեանց։

Մասնաժողովի անդամ քարտուղար՝ Մ. Պետրոսեան

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1912 ԹՎԻՆ

Օր. Բայսողոլեան Սուսաննա—նախագահ.
Օր. Փուղինեան Աննա—փոխ-նախագահ.
Իշ. Արղուբեան Աննա
Տիկ. Ալիբէգեան Աննա
Տիկ. Առաքելեան Աննա
Տիկ. Օրբէլի Վարվառէ
Տիկ. Պետրոսեան Սաթենիկ—գանձապահ
Տիկ. Գէորգեան. Պ. Սոֆիա
Տիկ. Խոջամիրեան՝ Սաթենիկ—քարտուղար

Փոխ. անդամներ

Տիկ. Ղամբարեան Սիրանոյշ
Տիկ. Փասպարեան Նատալիա
Տիկ. Շահազիզեան Մարիամ
Օր. Սուլթանեան Աստղիկ

Վերաստուգիչ յանձնաժողովի անդամները

Տիկ. Միլեան Վարվառէ
Տիկ. Կաֆեան Մարիամ
Օր. Նալբանդեան Հայկանուշ

Ծանօթ. Տարւայ միջում. վարչ. անդամուհի Տիկ. Առաքելեանի փոխարէն (որը հիւանդութեան պատճառաւ բացակայում էր) ներկայ է գտնուել վարչական նիստերին փոխ-անդամ, տ. Ս. Ղամբարեան։

ՀԱՅՈՒՀԵՌՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1912 ԹԻՒ

1912 թւի ապրիլի 8-ին կայացած ընդ. ժողովում նորից արծարծւեց՝ որբանոցի համար սեփական տուն ունենալու հարցը։ Մանրազնին և աչալուրջ կերպով քննութեան ենթարկելուց յետոյ՝ հանգան այն կէտին, որ որբանոցի թէ ներքին և թէ արտաքին բարեկեցութեան և թէ բարգաւաճման համար՝ անհրաժեշտ է լուծում ու գործնական ընթացք տալ այդ կարևոր խնդրին։

Ընդ. ժողովը այդ տւեալների հիման վրայ վերջնականապէս որոշում կայացնելուց յետոյ՝ յանձնարարեց վարչութեանը իրագործել տուն գնելու առթիւ տեղի ունենալիք օրէնսդրական բոլոր արարողութիւնները։

Վարչութիւնը իր առաջին վարչական նիստում ձայների առաւելութեամբ վերընտրեց ընկ. Նախագահ. Օր. Ս. Բայսողոլեանին, փոխ-նախագահ. օր. Ա. Փուղինեանին գանձապահ տ. Ս. Պետրոսեանին և քարտուղար Ս. Խոջամիրեանին, որից յետոյ վարչութեանս խնդրանօք ընդ. ժող. որոշման համաձայն, տուն առնելու վերաբերալ պահանջւելիք պատասխանատու գործողութիւնները ի կատար ածելու՝ յանձն առաւ Օր. Ս. Բայսողոլեան, ստանալով վարչութեանս ստորագրութեամբ հաւատարմագիր, վաւերացրած նոտարական կարգով։ Վարչութեանս հետագայ հերթական նիստերի զբաղմունքի առարկաները, մեծ մասամբ, կենդրոնացած էին որբերի կրթական հարցի շուրջը։

Ի նկատի ունենալով այն էական հանգամանքը, որ Քաղաքային տարրական դպրոցաւարտ որբերից մի քանիսի հասակը փոքր լինելու նկատմամբ՝ չի համապատասխանում՝ տեղւոյս գտնւած արհեստաւորաց ուսումնարանների կանոնադրութեան՝ վարչութիւնս բարւօք համարեց վարւել այս կերպ. այդպիսիներին, այսինքն հասակով փոքրերին՝ զետեղել առժամանակ հայոց միջնակարգ դպրոցներում։ Առժամանակ, որովհետև ըստ մեր կանոնադրութեան քաղաքային դպրոցաւարտները պէտք է ընդունեն միմիայն արհեստաւորաց ուսումնարաններ։ Այդ որոշման հիման վրայ որբերից 4-ին յաջող տեղաւորել ենք արհեստաւորաց ուսումնարաններում՝ 2 տղայի և 2 աղջկայ։

Սեպտեմբեր ամսում որբանոց ընդունւեց մի որբ վճարով, Նորին Վեհափառութեան ամենայն հայոց Գէորգ V Կաթուղիկոսի բարեհաճ ցանկութեամբ, Մարգարիտ Մանդակունի 8 տարոր, որն իր հիւանդութեան պատճառաւ ենթարկւել է օպերացիայի. ու այդպիսով ուսումնական տարւայ միջոցում հնարաւորութիւն չի եղել զետեղել որևէ ուսումնարան՝ մնացել է տանը։ Որբանոցում և թէ Արամեան հիւանդանոցում երկար բժշկւելուց յետոյ՝ ուղարկւել է հայրենիք Շուշի, մօր մօտ, բժիշկների խորհուրդի համաձայն կիսաորբ Գինովբէ Շամախեան 15 տարոր. ընկ. միջոցներից միանգամայն ստանալով 40 ր։ 1912 թւի տարւայ ընթացքում որբանոցում պատսպարւել են 24 երկսեռ երեխաներ, որոնք բոլորը (բացի Մ. Մանդակունուց) յաճախել են քաղաքային, միջնակարգ և արհեստաւորաց դպրոցները։

Վարչութիւնս ապրիլ ամսում կազմակերպել է մի զբօսանք՝ որ շնորհիւ աննպաստ եղանակների յետաձգւել է երեք անգամ և այդպիսով զուտ արդիւնք մնացել է միմիայն 180 բուբլի. տրւել է նաև օպերայ, «Լակմէ» որից զուտ արդիւնք է ստացւել 740 ր։

Շնորհակալութեամբ նւէրներ է ստացել հետևեալ անձերից և հաստատութիւններից. հանգուցեալ Մանթաշեանի կտակած գումարից՝ ըստ իր ժառանգների հայեցողութեան 2000 ր. եղբայր Բոզարջեաններից՝ իրանց մօր հոգեհացի փոխարէն 100 ր. Թիֆլիսի Քաղաքային տան ինքնավարութիւնից, Վարկային ընկերութիւնից, ժողովարանի աւագների խորհուրդից 100-ական ր. Պ. Ի. Ս. Ալիխանեանից իր մօր յիշատակին 50 ր. «Մշակ» լրագրի միջոցաւ պ. Բաղդասարեանից 50 ր. պ. Եւգ. Տէրեանից ի յիշատակ իր մօր Նինա Տէր-Մկրտչեանի 40 ր., Տիկ. Վ. Օրբելիից ի յիշատակ իր ամուսնու, 30 ր., Պարոնայք Ս. Սուսանեանից և Գ. Դ. Ալավերդեանից՝ հանգուցեալ Նունէ Բուղդանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 30 ր. Տիկնայք Մ. Աբեանից Վ. Գոգալեանից ի յիշատակ իր ամուսնու, Ն. և Դ. Փուղինեաններից, պ. Ստեփան Եարգուլեանից ի յիշատակ իր ամուսնու, պ. Գրիգոր Գ. Կուզանեանից, տ. Ս. Սունդուկեանից ի յիշատակ իր ամուսնու, եղբայր Կաֆեաններից ի յիշատակ իրանց մօր. Կոյո Խոջամինասեանից հանգուցեալ Զանջու-

ղազեանի դագաղի վրայ սլսակ դնելու փոխարէն այս վերոյիշեալ բոլոր անձերից ստացել է 25-ական ր.։ Կոյս Բերուչեանի միջոցով Իշ. Արղութեան Երկայնաբազուկից՝ հանգուցեալ կոյս Լօռիս-Մելիքեանի դագաղի վրայ սլսակ դնելու փոխարէն 20 ր.։ Եղբայր Եարգուլեաններից ի յիշատակ հանգուցեալ Լիւսի Եարգուլեանի 15 ր.։ Պ. Մելիք-Մարութեանից իր մօր յիշատակին 15 ր.։ Սուլխանեանից ի յիշատակ իր ամուսնու 10 ր.։ Պ. Սուլեանից ի յիշատակ իր ամուսնու 10 ր. և այլ անձերից ու նուիրած իրերի վաճառքից 113 ր. 24 կ.։ Մ. Մելիքեանի նուիրած գորգից 83 ր. 50 կոպ.։ Օր. Ս. Բայսոզլեանի հանգանակած 44 ր.։ Ընդամենը 3110 ր. 74 կ։

1912 թուին ընկերութեանս ընդ. մուտքը եղել է 6071 ր. 04 կ. իսկ ծախսը 3706 ր. 58 կ. ընդհանուր մուտքից մնացել է 2364 ր. 46 կ. որը աւելացել է ընկերութեանս գումարին։ Նախահաշուից քիչ է ծախսուել, որովհետև դեռ կարիք չի զգացուել ծախսեր անելու որբանոցի համար առնելիք տան, նախնական ծախսերի՝ այն է կահկարասիքի և այլն։

Տարեայ ընթացքում, ինչպէս և առաջին տարիները իր բարի ուշադրութեանն է արժանացրել մեր որբերին ատամնաբոյժ տիկ. Սոֆիա Ստեփանեան Քամոյեանը՝ նրանց բոլորին ձրիաբար բժշկելով իր դեղորայքով։

Նաև բժիշկներ՝ պ. պ. Գէորգ-Բէկեան, Մէլիք Նուբարեան և Թադէոսեան Տիգրան։

Իրանց մանկական պարտիզում ընդունել են ձրի որբերից մէկին Սմբատեան ամուսինները։

Ստացել է մեծ քանակութեամբ հին հագուստեղէն տ. Վարվառէ տէր-Աստուրեանից և այլ անձերից։

Ընկերութեանս անդամուհիների քանակը աւելացնելում, զբօսանքի, ներկայացման նպաստելում և այլ հանգամանքներում, իրանց ոյժերի համեմատ աշխատել են օգտակար հանդիսանալ ընկ. անդամուհի տիկնայք՝ Ա. Աթաբէգեան, Մ. Կաֆեան, Շ. Էյրանեան, Ս. Ղամբարեան, Շ. Մեսթարեան, Ն. Գասպարեան, Մ. Շահազիզեան, Ե. Պապովեան, օր. Վ. Լալայեան և ուրիշները։ Վերոյիշեալ բոլոր նուիրատուներին և անձանց, որոնք թէ նիւթապէս, թէ բարոյապէս աջակցել են ընկերութեանս բարգաւաճման և յառաջադիմութեան գործին, վարչութեանս իր նուիրական՝ քաղցր պարտականութիւնն է համարում, յայտնելու իր սրտանց շնորհակալութիւնները։

Ընկերութեանս կողմից վարչութիւնս շնորհաւորական ուղերձ է մատուցել «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանի առթիւ. նաև հրատարակչական ընկ. հրաւիրանօք՝ ներկայ է գտնուել Տաճերի գիւտի ինչ ձև տօնելու խորհրդակցութեան։

Իր ամբողջ կազմով ընդառաջ է գնացել կայսրան Նորին Վեհափառութեան ամենայն հայոց Գէորգ V Կաթուղիկոսի գալստեան ընդունելութեանը, ու բարեմաղթել է նրա գալուստը առաջնորդարանում յանձին օր. Բայսոզլեանի, հայցելով Նորեն Վեհափառութեան հայրական օրհնութիւնը և հովանաւորութիւնը։ Նորեն Վեհափառութիւնը խրախուսելով վարչութեանս իր գործունէութեան մէջ՝ այդ կնոջ յատուկ ասպարեզում, բարեհաճեց իր հաշուով մի որբ ընդունել տալ Որբախնամ Ընկ. որբանոցում։ Ինչպէս և վերը յիշեցինք վեհի ցանկութեամբ ընդունուեց որբ Մ. Մանդակունին։

Տարեայ ընթացքում վարչութիւնս ունեցել է 34 հերթական նիստ. երեքշաբթի օրերը վարչական կազմի համար ժամը 1-ից 3-ը իսկ ուրբաթ օրերը նոյն ժամերին ընկ. անդամուհիների և կողմնակի անձանց համար։

Երեխաներին հոգեկան-բարոյական հաճոյք պատճառելու համար կազմակերպուել են ընտանեկան ներկայացումներ. տարել են էքսկուրսիայով շրջակայքի, մօտիկ վայրերը, նաև մի քանի անգամ յաճախել են ներկայացումներ, սինեմատոգրաֆ և այլն։ Իսկ տարուայ վերջում ունեցել են տոնածառ։

Պետ. Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
Հայ. ՍՍՀ
Մշակ. Հ. Աբեղյանի անվ. Լեզվի ինստ.

Ընկերութեան միջոցները

1912 թ-ի յունուարից 1913 թ-ի յունուարի 1-ը

ՄՈՒՏՔ	Իսկական					Նախահաշիւ 1911 թ.	
Անդամավճարներ իսկական անդամուհին.	1145						
Օժանդակող անդամներից . . .	85						
1911 թ-ի ապառիկներ ստացած 1912 թ.	41						
Իշ. Եղիս. Ի. Բէհրութեանից 1911 թ. .	5						
Պարոն Գրիգոր Գալաչեանից 1911 թ. .	3		1299			1280	
Որբ Մարգարիտ Մանդակունու վճար .	180						
Որբ Թամարա Բաղչեանի վճար . .	156		336			150	
% 1911 թ-ի ընթացիկ հաշուից . .	108	50				108	50
% 200 ռուբլու օբլիգացիայից . .	10						
% Արժեթղթերից	296	80	415	30		415	30
Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնից	100					100	
Նվիրատուութիւններից . . .	3000	74	3100	74		2700	
Ներկայացումից և Զբօսանքից . .			920			1140	
			6071	04		5900	
Ծանօր. Ընկերութիւնը ստանալու է մի քանի անդամուհիների 1912 թ-ի վճար .	75						

ԾԱԽՍ	Իսկական					Նախահաշիւ 1911 թ.	
Մարմնոյներ: Լոճիկ կառավարչուհուն և ուսուցչին. .			387			387	
Աշխատողներին			269	50		250	
Բնակարանի վարձ և ջրի . . .			327	14		465	
Լուսաւորութիւն և վառելիք . .			205	65		250	
Դեղարանի			41	99		50	
Դասական պիտոյքների և ուսման վարձ	374	63	96	94		100	
Հագուստեղէնի	171	40	546	3		590	
Իրեղէնի և սապոն			134			145	
Մանր ծախս և բաղանիքի . . .			69	80		70	
Դիւանական և տպագրական . .			100				
Նոտարական և այլ ծախսերի . .			63	70		100	
Անակնկալ	500	38					
Հայ	286	15					
Միս	129	99					
Կաթ	120						
Շաքար, թէյ, գարու սուրճ . .	311	49					
Իւղ, պանիր, ձաւար և այլն . .	116	95	1464	83		1500	
Առօրեա ծախսեր և մրգեղէն . .			3706	58		3900	
Ընդամէնը. . .			2364	46		2000	
Ընկ. դումարին աւելացած . .			6071	04		5900	
Ընդամէնը. . .							

Ընկերութեան

1912 թւի յունուարի 1-ից

Մ Ո Ի Տ Ք	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
1912 թւին ստացած է . . .			6071	01
Մնացորդ 1911 թւի յունուարի 1-ին դանձապահի մօտ	1070	42		
Ընթացիկ հաշուով	2174	32		
Արժէթղթերով	7000		10242	74
Ընդամէնը . .			16315	78

Միջոցները

1913 թւի յունուարի 1-ը

Ե Լ Ք	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
Ծախսուած է 1912 թւին ընդ. . .			3706	58
Առձեռն դրամ դանձապահի մօտ 1913 թւի յունուարի 1-ին	729	50		
Ընթացիկ հաշուով	6879	70		
Արժէթղթերով	5000		12609	20
Ընդամէնը . .			16315	78

Նախահաշիւ ընկերութեան

1913 թ. ի

ՄՈՒՏՔ	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
Անդամավճարներ	1300			
Թիֆլիսի քաղաքային ինքնավ. . .	100			
Տիկ. Վարվառէ Վաս. Թամամշեան . .	200			
1912 թ. ի ընթացիկ հաշի % . . .	188	44		
Արժեթղթերից	77	18		
Վճար գիշերօթիկ որբ Մ. Մանդակունուց .	180			
Գիշերօթիկ որբ Թամարա Բաղչեանի .	156			
Լևոն Էլիմիրզեանի կտակի համաձայն .	100			
Նուիրատուութիւններ	700			
Ներկայացումից և Զբօսանքից . . .	1000			
Ընդամէնը . .	4001	62		

ԾԱԽՍ	Ռուբ.	Կոպ	Ռուբ.	Կոպ.
Ոռճիկ կառավարչուհուն և ուսուցչին. .	450			
Աշխատողներին	270			
Դեղարայքի	50			
Դասակոն պիտոյքների և ուսման վարձ .	100			
Վառելիքի, լուսաւորութեան . . .	250			
Մանր ծախս	140			
Տպագրական և գիւանական . . .	80			
Հագուստեղէնի և վերանորոգման . .	700			
Մթերքների	1500			
Անակնկալ ծախսերի	70			
Ջրի և բնակարանի 6 ամսւայ վարձ և վերանորոգման	391	62		
Ընդամէնը . .	4001	62		

Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը

Հայուհեաց որբախնամ ընկերութեան Վերաստուգիչ յանձնաժողովը քննելով ընկերութեան 1911 թ.ի հաշիւները և փաստաթղթերը, գտաւ կանոնաւոր և ճիշտ։

Անդամուհիներ { Վ. Միլեան
Մ. Կաֆեան

ОТЧЕТЪ

Общ. Призр. Сиротъ Армянъ Закавказья

За 1912 годъ

СРЕДСТВА ОБЩЕСТВА

ПРИХОДЪ	Дѣйствительный				Смѣта на 1912-ого годъ.	
Взносы дѣйствительн. членовъ	1145					
— Членовъ соревнователей. .	85					
Долгъ нѣскольк. членовъ за 1911 годъ.	61					
— Кн. Елизаветы Ив. Бебутовой за 1911 годъ . . .	5					
— Григорія Калачьянъ . .	3		1299		12[illegible]0	
За пансіонъ Мандакуни Маргариты	180					
За пансіонъ Бахчіанъ Тамары .	156		336		150	
% съ суммы, наход. на текущемъ счету за 1911-ый годъ. .	108	50			108	50
% съ облигаціи на 200 рублей	10					
% съ билетовъ на вкладъ. .	296	80	415	30	415	30
Отъ Тифл. Городской Управы .	100				100	
Пожертвованія	3000	74	3100	74	2700	
Отъ спектакля и гулянья . .			9[illegible]0		1140	
Всего			6071	04	5900	

Примѣч. Общество имѣетъ получить отъ нѣкоторыхъ членовъ взносы за 1911-ый годъ 75 руб.

РАСХОДЪ	Дѣйствительный				Смѣта на 1912 ый годъ.	
Жалованье надзирательн. и учит.			387		387	
— служащимъ . . .			269	50	250	
Квартира и вода . . .			327	14	465	
Освѣщеніе и отопленіе . .			205	65	250	
Лѣкарство , . . .			41	99	50	
Учебныя пособія и за правоучен.			96	94	100	
Окопировка	374	63				
Обзаведеніе и мыло . . .	171	40	546	3	590	
Мелкій расходъ и баня . .			134		145	
Типограф. и канцелярскіе . .			69	80	70	
Расходы нотаріальные и др. .			100			
Непредвидѣнный. . . .			63	70	100	
Продовольствіе: Хлѣбъ	500	58				
Мясо	286	15				
Молоко	129	99				
Сахаръ, чай и кофе ячмен. .	120					
Масло, сыръ, крупа и др. .	3 1	49				
Ежедн. расходъ и фрукты .	116	95	1464	83	1500	
Итого			3706	58	3900	
Прибавка къ капиталу . .			2364	46	2000	
Всего			6071	04	5900	

СРЕДСТВА

отъ 1-го января 1912-го года

ПРИХОДЪ	Рубли	Коп.	Рубли	Коп.
Въ 1912-омъ году получено . .			6071	04
Остатокъ съ 1911-го года:				
У казначея	1070	42		
На текущемъ счету. . . .	2174	32		
Билеты на вкладъ	7000		10,244	74
Всего			16,315	78

ОБЩЕСТВА

по 1-ое января 1913-го года

РАСХОДЪ	Рубли	Коп	Рубли	Коп.
Израсходовано за 1912-ый годъ .			3706	58
Переносится на 1913 ый годъ:				
У казначея	729	50		
На текущемъ счету. . . .	6879	70		
Билетъ на вкладъ	5000		12,609	20
Всего			16,315	78

Смѣта Общества на 1913-ый годъ

ПРИХОДЪ	Рубли	Коп.	Рубли	Коп.
Взносы членовъ	1300			
Отъ Тифл. Городской Управы . . .	100			
Отъ Варвары Вас. Тамамшевой . . .	200			
%, съ текущаго счета за 1912-ый годъ .	188	41		
Съ билета на вкладъ	77	18		
За пансіонъ Мандакуни Маргар. . .	180			
За пансіонъ Бахчіевой Тамары . . .	153			
По завѣщанію Левонъ К. Элимирзова. .	100			
Пожертвованія	700			
Отъ спектакля и гулянія	1000			
Всего	4001	62		

РАСХОДЪ	Рубли	Коп	Рубли	Коп.
Жалованье надзирательн. и учителю . .	450			
— служащимъ	270			
Лѣкарство	50			
Учебныя пособія и за правоученіе . .	100			
Отопленіе и освѣщеніе	250			
Мелкій расходъ	140			
Канцелярскій и типограф. . . .	80			
Окопировка и обваведеніе. . .	700			
Продовольствіе	1500			
Непредвидѣнные	70			
За 6 мѣс квартир., воду и починка кварт.	391	62		
Всего	4001	62		

Ա. Մանթաշեանի կտակած գումարից . .	2000	
Եղբայր Բոզարջեաններից, իրանց մօր հոգեհացի փոխարէն	100	
Թիֆլիսի քաղաքային Ինքնավարութիւնից .	100	
» քաղաքային Վարկային ընկերութիւնից	100	
» Ժողովարանի աւագների խորհրդից .	100	
«Մշակ» լրագրի միջոցաւ պ. Բաղդասարեանից .	50	
Օր. Փուղինեանի միջ. պարոն Յ. Ս. Ալիխանեանից իր մօր. Մելանիա Ալիխանեանի յիշատակին	50	
Պարոն Եւգենիա Տէրեանից, իր մօր յիշատակին.	40	
Տիկ. Վարվառէ Օրբելիից, իր ամուսնու յիշատակին	30	
Օր. Բայսօղոլեանի հանգանակած . . .	44	
Մայսէյ Մելիքեանի նուիրած գորգից . . .	78	50
Տիկ. Մարգարիտ Աբեանից	25	
Տիկ. Վարվառէ Գուլազեանից, ի յիշատակ իր ամուսնու	25	
Օր. Փուղինեանի միջ Ն. և Դ. Փուղինեաններից.	25	
Պ. Ստեփան Եարգուլեանից ի յիշատակ իր ամուսնու	25	
Պ. Գրիգոր Գ. Կուզանեանից	25	
Օր. Ս. Բայսօղոլեանի միջ, Սոֆիա Սունդուկեանից, ի յիշատակ իր ամուսնու . . .	25	
Եղբայր Կաֆեաններից իրանց մօր յիշատակին .	25	
Պարոններ Ստեփան Ա. Սուսանեանից և Գէորգ Դ. Ալավերդեանից հանգուցեալ Նունէ Մ. Բուղդանեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն	30	
Կոյս Խօջամինասեանի միջոցաւ հանգուցեալ Ջանջուղազեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխ.	25	
Կոյս Բերուչեանի միջոցաւ իշ. Արղութեան Երկայնաբազուկից հանգ. կոյս Լոռիս-Մելիքեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն.	20	

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղբայր Եարգուլեաններից ի յիշատակ Լիւսիա Եարգուլեանի	15	
Տիկ. Ս. Եգ. Միրաքեանից ի յիշատակ իր ամուսնու	10	
Պարոն Յ. Սաֆարեանից ի յիշատակ իր հօր .	10	
«Մշակ» լրագրի միջոցաւ մի ոմնից . . .	10	
Պարոն Սուլեանից ի յիշատակ իր ամուսնու .	10	
Պ. Մելիք-Մարութեանից, իր մօր դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն	15	
Տիկ. Մարիամ Բէժանբէկից, ի յիշատակ իր դուստր Հեղինէի	6	
Պ. Յար. Յակոբջանեանի հանգանակած . .	13	54
Իշ. Արղութեան Աննայի հանգանակած . .	7	
օր. Աննա Ֆուղինեանից.	5	
Մայրապետ Թայիրեանից	3	
Տ. Մարիամ Աղբաշեանից . . .	3	
Տիկ. Մխիթարեանի միջոցաւ մի ոմնից . .	5	
Տիկ. Նատալիա Շալամեանից	3	
Տիկ. Եղիսաբէթ Առաքելիանից. . . .	3	
Տիկին Եւա Սունդուկեանից	2	
Տիկին Թ. Պետրոսեանից	5	
Կոյս Բերուշեանից	2	
Նուիրած իրերի վաճառքից	30	70

ԻՐԵՐՈՎ ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

տիկ. Մ. Կաֆեանից իւղ, բրինձ և միրգ
տիկ. Եղ. Առաքելեանից խմորեղէն
տիկ. Ս. Խոսրովեանից գլօբուս և շորեղէն
տիկ. Ս. Խօջամիրեանից հագուստներ և խմորեղէն
տիկ. Վ. Օրբելիից ուտելիղէն
իշ. Ա. Արղութեանից խմորեղէն
օր. Ա. Փուղինեանից խմորեղէն և հագուստներ
տիկ. Ս. Քալանթարեանից հագուստներ
տիկ. Դ. Սիմոնովից զանազան հագուստներ
տիկ. Վ. Տէր-Աստվածատուրեանից շատ հագուստներ տղամարդու և երեխայոց
տիկ. Ն. Ալիբեկեանից ուտելեղէն
տիկ. Վ. Միրիմանեանից հագուստներ
օր. Ս. Բ.-ից հագուստներ
տիկ. Ս. Կաֆեանից մահճակալ, մատրաս և հագուստներ
իշ. Մ. Թումանեանից մահճակալ և մատրաս
տիկ. Մ. Զաւրիեվից զանազան հագուստներ

ԱՆԻԱՆԱՑՈՒՑԱԿ

ՈՐԲԵՐԻ 1912 Թ.

Որբերի անունները և ազգանունները	I Երբ են ծնուել	II Որտեղացի են	III Երբ են ընդունուել	IV Որքէ թէ կիսաորբ	V Որտեղ են սովորում
1 Աղախանեան Աւետիք	1901 թ. 11 մայիսի	Զանգեզուրից	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաքային դպրոցում
2 Աղախանեան Համբարձ.	1898 թ. 7 մարտի	Զանգեզուրից	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաք. արհեստաւորաց դպ.
3 Աւետիսեան Արշալոյս	1897 թ. 8 փետրու.	Շուշեցի	1907 թ. մայիսին	Որբ	Գայիանեան դպրոցում
4 Աւետիսեան Սեդրակ	1905 թ. 15 օգոստ.	Թիֆլիզեցի	1911 թ.	Կիսաորբ	Սմբատեան ամուս. Ման. պար.
5 Բաբայեան Գրիգոր	1900 թ. 13 օգոստ.	Թիֆլիզեցի	1908 թ. յունուարին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
6 Բեբուրեան Գէորգ	1904 թ. 2 նոյեմբ.	Թիֆլիզեցի	1911 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
7 Բաղչեան Թամարա վճ.	1897 թ. 7 ապր.	Թիֆլիզեցի	1910 թ. սեպտեմբ.	Որբ	3 Իգական գիմնազ.
8 Գրիգորեան Աստղիկ թ.	1901 թ. 4 յունու.	Ախալցխացի	1909 թ.	Հայրը խելագ. մայրը տկ.	Քաղաք. արհեստաւորաց դպր.
9 Դավիթեան Վաղինակ	1900 թ. 1 մարտի	Նոր-Բայազէտցի	1908 թ. մարտին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
10 Լեոնեան Շաւարշ	1901 թ. 25 սեպ.	Պարսկաստ.	1907 թ. յունիսին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
11 Խաչատրեան Շողակ.	1899 թ. 7 սեպ.	Թիֆլիզեցի	1907 թ. մայիսին	Որբ	Զիգրաջենի դպրոցում
12 Կոլոտեան Համասիւռ	1898 թ. 8 յունու.	Սարիղամիշցի	1907 թ. յուլիսին	Կիսաորբ	Քաղ. արհեստաւորաց դպրոց.
13 Միրիգոդեան Աստղիկ	1898 թ. 8 սեպ.	Թիֆլիզեցի	1908 թ. յունուար	Որբ	Յովհաննեան դպրոցում
14 Մովսիսեան Արփենիկ	1902 թ. 14 յուն.	Վանեցի	1908 թ. յունուար.	Կիսաորբ	Գայեանեան դպրոցում
15 Մելքոյեան Ա. Օվսաննա	1900 թ. 19 յուն.	Թիֆլիզեցի	1911 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
16 Նալբանդեան Սաթենիկ	1902 թ. 3 մարտ.	Թիֆլիզեցի	1909 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
17 Շամախեան Գենովբէ	1897 թ. 1 սեպ.	Շուշեցի	1909 թ.	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
18 Սարգսեան Մամիկոն	1899 թ. 20 մայս.	Թիֆլիզեցի	1907 թ. մայսին	Որբ	Քաղաքային արհեստաւոր. դպ.
19 Սուլթանեան Անահիտ	1903 թ. 6 սեպ.	Թիֆլիզեցի	1909 թ.	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
20 Սեակեան Արտեմիս	1901 թ. 24 օգոս.	Թիֆլիզեցի	1909 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
21 Փիլիպոսեան Աբգար	1899 թ. 20 մայիս	Թիֆլիզեցի	1907 թ. մայիսին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
22 Օհանեան Եւա	1902 թ. 25 փետ.	Կօղա գիւղից	1911 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
23 Ցարուքիւնեան Աստղիկ	1898 թ.	Ալեքսանդր.	1907 թ.	Որբ	Քաղաք. արհեստաւորաց դպր.
24 Ղարագեօզեան Կարապ.	1902 թ. 8 յուն	Ախալցխացի	1907 թ. յունուար.	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
25 Մանդակունի Մարգ.	1904 թ. 11 մայսի	Թիֆլիզեցի	1912 թ. սեպտեմբ.	Կիսաորբ	

ՄԾՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

† Մայրապետ Աբամելիքեան Յեփրոսինէ
† Կոյս Էնֆիաճեան Իսկուհի
օր. Արշալոյսեան Շամունէ
պ. Մէլիք-Ազարեան Ալէքսանդր
պ. Սուլխանեան Մինաս

Իսկական անդամներ 12 ռուբ. աւելի վճարող

Տ. Գէորգեան Սոֆիա Մին. 25 | Տ. Գուլազեան Վարվառէ 20

Տարեկան 12 ռուբ. վճարողներ

Իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ
Տ. Աբեան Մարգարիտ
տ. Աթաբէկեան Աննա
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Առաքելեան Սոֆիա
օր. Առաքելեան Աննա
տ. Աքրիկեան Եղիսաբէթ
տ. Ալիբէկեան Նունէ
տ. Անտոնեան Կատարինէ
օր. Բայսօղլեան Սուսաննա
տ. Բարինագօ Լիւբով
տ. Բէժանբէգ Սոֆիա
տ. Բոզարջեան Սոֆիա
օր. Խոսրովեան Նինա
տ. Խոջամիրեան Վարվառէ
տ. Կաֆեան Սաթենիկ
տ. Կաֆեան Նունէ
տ. Կաֆեան Տիրուհի
տ. Կաֆեան Մարիամ
տ. Միլեան Վարվառէ
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրաքեան Նունէ
տ. Միրաքեան Մարիամ
տ. Մէլիքեան Սոֆիա
տ. Մխիթարեան Սուսաննա
տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Շահվերդեան Եփեմիա
տ. Պետրոսեան Սաթենիկ
տ. Պետրոսեան Թագուհի
տ. Պսարև Նինա
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Տէր-Աբրահամեան Եղիսաբէթ
տ. Տէրեան Նատալիա
տ. Տէր-Սահակեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա Ալ.
տ. Քալանթարեան Սաթենիկ
տ. Քազարեան Մարիամ

Տարեկան 10 ռուբ. վճարողներ

տ. Ամբարդանեան Թամարա
տ. Արարատեան Աննա

տ. Գէորգեան Սոֆիա Պետ.
տ. Գիւլբէնգեան Զարուհի
տ. Զարգարեան Նունէ
տ. Խունունց Գայեանէ
տ. Մալեան Աննա
տ. Շահլամեան Նատալիա
տ. Վարդանեան Աննա
տ. Վարդանեան Նունէ
օր. Փուղինեան Աննա
տ. Ղազազչեան Մարիամ
տ. Թումանեան Եղիսաբէթ 8 ռ.

Տարեկան 6 ռուբ. վճարողներ

Իշ. Արղութեան Աննա
օր. Աբէլեան Մարգարիտ
տ. Աւետիսեան Հեռսիլիա
օր. Աղանեան Նւարդ
տ. Սմիրեան Կատարինէ
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Ազբաշեան Մարիամ
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Ամիրաղեան Զարուհի
տ. Ադամալեան Գիւլիզար
տ. Ապրէսեան Անահիտ
տ. Բաղրեան Օլգա
տ. Գասպարեան Նատալիա
տ. Գէորգեան Աննա
տ. Գէորգեան Նունէ
տ. Գուլև Աննա
տ. Դանդուրեան Վարսենիկ
տ. Դանիելեան Սրբուհի
օր. Երզնկեան Անահիտ
տ. Զօրեան Եղիսաբէթ
Իշ. Թումանեան Աննա
տ. Խոջամիրեան Սաթենիկ
տ. Խոսրովեան Սոֆիա
տ. Կրէթեան Օվաննա
տ. Ղամբարեան Նունէ
տ. Ղամբարեան Սիրանոյշ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մաղաթեան Նատալիա
Տիր. Մատինեան Վարվառէ
օր. Մելիք-Հայկազեան Եղիսաբէթ
տ. Միլեան Մարիամ
տ. Յովհաննիսեան Դարիա
տ. Նահապետեան Եւա
տ. Շարբաբչեան Սրբուհի
տ. Շալամեան Մարիամ
տ. Զաթալբաշեան Սոֆիա
տ. Սարգսեան Նւարդ
տ. Սէյլանեան Վարդուհի
տ. Սէյլանեան Տիրուհի
տ. Վարդանեան Հռիփսիմէ
տ. Տէր-Անտոնեան Շուշանիկ
տ. Տէր-Խաչատրեան Ղումաշ
տ. Փիթոյեան Նադեժդա
տ. Քալանթարեան Վարդուհի
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Զանազեան Վարվառէ
տ. Օրբէլի Վարվառէ
օր. Օրբէլի Ուստիանա
տ. Օքոյեան Սաթենիկ
տ. Իւզբաշեան Սոֆիա

Տարեկան 5 ռուբ. վճարողներ

տ. Ամիրաղեան Եղիսաբէթ
տ. Բահադրեան Մարթա
տ. Բաղրեան Դարիա
Իշ. Բէհբութեան Եղիսաբէթ
տ. Գուրգենովա Թերեզա
տ. Դոլուխանեան Եւգենիա

տ. Դոլուխանեան Եւգենիա
տ. Դիւանեան
տ. Եղիազարեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
տ. Խրխրեան Սօֆիա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Հասան Զալալեան Աստղիկ
տ. Զիթողցեան Աննա
տ. Մատինեան Հայկանդուխտ
տ. Մալեան Կատարինէ
տ. Յովհաննիսեան Վարդուհի
տ. Պապովեան Եւգենիա
տ. Զանգուլեան Նունէ
տ Սարգիսեան Կատարինէ
տ. Սիմոնովա Դարիա
տ. Փուղինեան Նունէ
օր. Քանդարեան Շուշանիկ

Տարեկան 4 ռուբ. վճարողներ

Կոյս Բերուչեան Երմոնիա
Կոյս Խարազեան Շուշանիկ

Տարեկան 3 ռուբ. վճարողներ

տ. Աբովեան Սիրանոյշ
օր. Ալխազեան Նինա
Իշ. Արզումեան Կատարինէ
տ. Բաշբէուկ-Մելիքեան Աննա
Իշ. Բէհբուտեան Կատարինէ
Օր. Բուղդանեան Նինա
օր. Գալաչեան Սօֆիա
տ. Գրիգորեան Զարի
Կոյս Գուլազեան Կատարինէ
տ. Գուլուլեան Նատալիա
տ. Դաւիթեան Գայեանէ
տ. Դաւիթեան Հայկան դուխտ
տ. Եղիգարեան Օլգա
տ. Զուրաբեան Սօֆիա
Տիր-Զարթեղեան Աննա
տ. Էյրանեան Շուշանիկ
Իշ. Թումանեան Մարիամ
օր. Լալաեան Վարվառէ
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ
տ. Լոմիձէ Սիդոնիա
տ. Խոջամիրեան Գենովաբէ
տ. Կոստանեան Հեղինէ
տ. Ղազագչեան Մարիամ
Կոյս Ղոնեան Հռիփսիմէ
տ. Ճշմարիտեան Սաթենիկ
տ. Ճերմակեան Սրբուհի
տ. Միրիմանեան Վարվառէ
տ. Մսրեան Եղիսաբեթ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Յովհաննիսեան Նատալիա
օր. Նալբանդեան Հայկանուշ
տ. Շահպարոնեան Ռոզալիա
տ. Շահազիզեան Մարիամ
տ. Զայգէշտեան Թամարա
տ. Ռոստոմեան Սալոմէ
տ. Ռօտինեան Սօֆիա
օր. Սուլխանեան Աստղիկ
տ. Սմբատեան Սրբուհի
տ. Սաղոյեան Տիրուհի
տ. Սահակեան Թերեզա
Տիր. Սահակեան Վարդուհի
օր. Սուրգոնեան Նունէ
օր. Սայեաթնեան Վարվառէ
Տիր. Տարիելեան Շուշանիկ
տ. Տասալեան Օլգա
տ. Տէր-Միրաքեան Շուշանիկ

տ. Տէր-Յովհաննիսեան Կատարինէ
տ. Տէր-Գրիգորեան Օվսաննա
տ. Տէր-Աբրահամեան Արփենիկ
տ. Տէր-Յարութիւնեան Լուսիկ
տ. Տէր-Յովսէփեան Եղիսաբեթ
տ. Տիգրանեան Նատալիա
տ. Փարսադանեան Նինա
տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քալանթարեան Թամարա
տ. Իւանեան Նունէ

Օժանեակող Անդամներ

պ. Էնֆիաճեան Արտաշէս 20 ր.
պ. Սուրէնեան Ալեքսանդր 10 ր.
պ. Եարգուլեան Ստեփան 6 ր.
պ. Կաֆեան Գաբրիէլ 6 ր.
պ. Ռոտինեան Գաբրիէլ 6 ր.
բժ. Խաչատրեան Վլադիմիր 5 ր.
պ. Փուղինեան Գրիգոր 5 ր.
պ. Գալաչեան Խաչատուր 3 ր.
պ. Կաճկաճեան Արտաշէս 3 ր.
պ Մարտիրոսեան Յովհաննէս 3 ր.
պ. Մովսէսեան Գէորգ 3 ր.
պ. Մելիք-Հայկազեան 3 ր.
պ. Մելիքեան Մայիսէյ 3 ր.
պ. Զաւախեցի 3 ր.
Տէր Յովհաննէս Ամիրխանեան 3 ր.
բժ. Քալանթարեան Լևոն 3 ր.

Հայուհեաց որբանոցամ Ընկերութեան 1913 թուի մարտի 31-ին ընդ. ժողովի ծրագիրը։

1) 1912 թուի մարտի 29-ի ընդ. ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2) 1912 թուի ընկերութեան գործունէութեան ընթերց.

3) Որբանոցի համար տուն առնելու առթիւ հրաւիրած մասնաժողովի արձանագրութեան ընթերցումը։

4) 1913 թուի նախահաշուի ընթերցումը։

5) Ռոմանովների տան՝ 300-ամեա յօբելեանի առթիւ ընդունելիք որբի մասին խորհրդակցութիւնը.

6) Հերթական կարգով դուրս գնացող վարչութեան անդամների, փոխ-անդամների և վերատեսուչ անդամների ընտրութիւնը։

«Ազգային գրադարան»
NL0215831

43.050